# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**իրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/80**

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/80 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով իրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված իրավերում 8-րդ չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** 8-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ ՝

«Պովիդոն-յոդ լուծույթ արտաքին կիրառման 30մլ

Խտությունը՝ 10%

Նպատակ՝ մաշկի և վերքերի ախտահանում:

Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված, իսկ տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացվում է մատակարարի կողմից:

Դեղի պիտանելիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը.

ա. պիտանելիության 2,5 տարուց ավելի ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանելիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն երկու երրորդը:»

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հայրապետյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. Փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ